ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Արմեն Գրիգորյան, Անվտանգության խորհրդի քարտուղար
   Լուսինե Մարքարյան Սենագանի, Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդական
   Սևակ Ղահրամանյան, Անվտանգության խորհրդի քարտուղարի օգնական

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Իրանի Իսլամական Հանրապետություն՝ Թեհրան, հոկտեմբերի 1-ից և 2-ը

3. **Հրավիրող կողմը.**

   Իրանի Իսլամական Հանրապետության Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար պարոն Ալի-Աքբար Ահմադիանը

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Իրանական կողմի հետ քննարկվել է ՀՀ-ԻԻՀ երկկողմ հարաբերությունները և դրանք խորացնելու հնարավորությունները: ԱԽ քարտուղարը և ուղեկցող պատվիրակությունը հանդիպումներ են ունեցել ԻԻՀ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որոնց ընթացքում ընդգծվել է ՀՀ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պահպանման կարևորությունը:

5. **Քննարկված թեմաները.**

   Տնտեսական համագործակցություն, անվտանգային համագործակցություն:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   ՀՀ ԱԽ քարտուղարը հանդիպել է հետևյալ պաշտոնյաների հետ.
   -ԻԻՀ Նախագահ պարոն Իբրահիմ Ռայիսի
   -ԻԻՀ Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար պարոն Ալի-Աքբար Ահմադիան

-ԻԻՀ Զինված ուժերի Գերագույն Շտաբի պետ պարոն Հոսեյն Բաղերի
-ԻԻՀ Արտաքին գործերի նախարար պարոն Հոսեյն Ամիր Աբդոլլահիան

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ միջգերատեսչական մակարդակով քննարկել և եզրակացնել երկկողմ համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Հանդիպումների ընթացքում չեն ստորագրվել փաստաթղթեր:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հանդիպումների արձանագրությունները ներկայացվել են ՀՀ վարչապետին՝ համապատասխան նախարարություններին հանձնարարականներ տալու նպատակով:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

Արմեն Գրիգորյան, 05 հոկտեմբեր 2023

Լուսինե Մարքարյան Սենագանի, 05 հոկտեմբեր 2023

Սևակ Ղահրամանյան, 05 հոկտեմբեր 2023